

ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հունվարի 5-ին, կիրակի.— ՃՐԱԳԱԼՈՅՑ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ:

«Այսօր տօն է Ս. Ծննդեան, աւետիս,
Տեառն մերոյ և յայտնութեան, աւետիս»:

Սրբազան տաղերգուի այս գեղեցիկ ավետիսով խորհրդավոր հանդիսությամբ ավետվում է մեր տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի հրաշափառ Ծնունդը:

Ավելի քան 17 դարեր Հայ Առաքելական Եկեղեցին մեծ շուքով և հանդիսավորությամբ է տոնում Քրիստոսի Ծնունդն ու Հայտնությունը:

Այս տարի ևս, օրվա մեծ տոնի առիթով, երեկոյան ժամը 17-ին, Մայր տաճարում տեղի ունեցավ «Ճաշու» և «Երեկոյան» հանդիսավոր ժամերգություններ:

Ամեն տարի հայ հավատավոր ժողովուրդը այդ խորհրդավոր երեկոյան ուխտի է եկել Ս. Էջմիածին՝ հաղորդակից դառնալու սրբազան արարողություններին, ջերմեռանդ աղոթելու՝ Հայոց աշխարհի խաղաղության և անսասանության համար:

Երեկոյան, հանդիսավոր թափորով, Մայր տաճար է առաջնորդվում Վեհափառ Հայրապետը: Սկսվում է Ճրագալույցի ս. պատարագը: Ավագ ս. խորանի վրա սուրբ և անմահ պատարագ է մատուցում Ս. Հռիփսիմե վանքի վանահայր գերշ. Տ. Անանիա եպս. Արաբաջյանը:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվում է Ս. Ծննդյան նախատոնակի կարգը:

Սրբազան արարողությունից հետո եկեղեցական թափորը «Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ» ու «Խորհուրդ մեծ եւ սքանչելի» շարականների երգեցողությամբ Վեհափառ Հայրապետին առաջնորդում է Վեհարան, ուր Մայրավանքի միաբանությունը Հայոց Հայրապետին շնորհավորում է Ս. Ծննդյան մեծ տոնի առթիվ:

* * *

Հունվարի 6-ին, երկուշաբթի.—ՏՕՆ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ:

Այսօր Մայր տաճարում տոնական ժամերգությունից հետո, ժամը 11-ին, սկսվում է ս. պատարագը:

Օրվա մեծ տոնի առիթով Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, հանդիսավոր ս. պատարագ է մատուցում Մայր Աթոռի դիվանապետ գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Մայր տաճարի զանգերի ավետաբեր ղողանջների ներքո հնչում է Ս. Ծննդյան բերկրալի ավետիսը՝ «Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ» մեղեդին: Հավատացյալների և ուխտավորների խուռներամ բազմությունը հոգևոր ուրախության ու ցնծության պահեր է ապրում:

Ավագ ս. սեղանի առաջ, ատյանում, ս. պատարագին ներկա են Հայաստանի Հանրապետության նախագահ տիար Լևոն Տեր-Պետրոսյանը, փոխնախագահ, վարչապետ տիար Գագիկ Հարությունյանը, Հայաստանի խորհրդարանի նախագահ տիար Բաբկեն Արարքցյանը և պաշտոնական այլ անձինք:

Պատարագի սրբազան արարողությունը Երևանի հեռուստատեսությամբ, ուղիղ եթերով, սփռվում է մեր հանրապետության ողջ տարածքում:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը հավուր պատշաճի բարոզ է խոսում՝ շնորհավորելով բովանդակ հայության, որ ի Հայաստան և որ ի Սփյուռս աշխարհի, Նոր տարվա և Ս. Ծննդյան տոնը: Այնուհետև Նորին Սրբության նախագահությամբ, Ավագ ս. խորանի վրա, կատարվում է Զրօրհնյաց հանդիսավոր արարողությունը՝ ոգեկոչելով հիշատակը Ս. Հովհաննես Մկրտչի ձեռքով Հորդանան գետում Հիսուս Քրիստոսի մկրտությունը:

Ապա Հայոց Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Վեհարան, ուր օրվա մեծ տոնի առիթով Նորին Սրբության կողմից տրվում է ճաշկերույթ, որին մասնակցում էին Մայրավանքի միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները և Մայր Աթոռի պաշտոնեությունը:

Ճաշկերույթին ներկա էին Հայաստանի Հանրապետության նախագահ տիար Լևոն Տեր-Պետրոսյանը, փոխնախագահ, վարչապետ Գագիկ Հարությունյանը և խորհրդարանի նախագահ Բաբկեն Արարքցյանը:

Վեհափառ Հայրապետին, Հայաստանի նախագահին և ներկաներին Ս. Ծննդյան տոնի առիթով շնորհավորական խոսք է ասում Մայր տաճարի լուսարարապետ գերշ. Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը:

Այնուհետև փոխադարձ շնորհավորանքի և բարեմաղթանքի խոսքեր են ասում Հայաստանի Հանրապետության նախագահը և Վեհափառ Հայրապետը: